ConverseBank

«07» 06 2023

№ COD/0962

Հավելված 4
ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-23/1-Ա* ծածկագրով
հրատապության հիմքով պայմանավորված
մեկ անձից գնում հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N COD/0962
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Ջրային կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից N ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-23/1-Ա ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՄԵԴԻՍՈՆ ԷՅԲԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-23/1-Ա «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ» /այլ շենքերի, շինությունների հիմանորոգում- ՀՀ Լոռու մարզի Մեծավանի ջրամբարի վերականգնման և վերազինման աշխատանքներ/ (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 35,440,000.00 /երեսունհինգ միլիոն չորս հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է 07.06.2023թ.-ից մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 28.06.2024թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՋԿ ՀՄԱԱՇՁԲ-23/1-Ա ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իրավասու անձ.՝

Կատարող՝Մ.Գալստյան/ 010 511 211 (2339)

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ, 00000291 ԵՐԵՎԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 26/1 Վարկային գործառնությունների հատված

Վարկային գործառնությունների պետ
Head of Credit Operations
Արշակ Խոջոյան
Arshak Khojoyan
ստորագրություն
signature

For Credit Operations
26/1 V. SARGSYAN str., YEREVAN
CONVERSE BANK CJSC, 00000291

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 26/1
Հեռ.՝ (+374 10) 511 211, Ֆաքս՝ (+374 10) 511 212
www.conversebank.am

"Converse Bank" CJSC
26/1, V. Sargsyan str., Yerevan 0010, RA
Tel.: (+374 10) 511 211, Fax: (+374 10) 511 212
www.conversebank.am

36225

ConverseBank

«07» 06 2023

№ COD/0961

Հավելված 5
ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-23/1-Ա* ծածկագրով
հրատապության հիմքով պայմանավորված
մեկ անձից գնում հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N COD/0961
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Ջրային կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՄԵԴԻՍՈՆ ԷՅԲԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-23/1-Ա «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ» /այլ շենքերի, շինությունների հիմնանորոգում-ՀՀ Լոռու մարզի Մեծավանի ջրամբարի վերականգնման և վերազինման աշխատանքներ/ (այսուհետ՝ պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 11,815,000.00 /տասնմեկ միլիոն ութ հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է 07.06.2023թ.-ից մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի՝ ներառյալ երաշխիքային ժամկետը, օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 30.06.2025թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-23/1-Ա ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իրավասու անձ՝

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ 00000291 ԵՐԵՎԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 26/1 Վարկային գործառնությունների համար
Վարկային գործառնությունների պետ
Head of Credit Operations
Արշակ Խոջոյան
Arshak Khojoyan
ստորագրություն signature
For Credit Operations
26/1 V. SARGSYAN str., YEREVAN
CONVERSE BANK CJSC, 00000291

Կատարող՝Մ.Գալստյան/ 010 511 211 (2339)

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 26/1
Հեռ.՝ (+374 10) 511 211, Ֆաքս՝ (+374 10) 511 212
www.conversebank.am

"Converse Bank" CJSC
26/1, V. Sargsyan str., Yerevan 0010, RA
Tel.: (+374 10) 511 211, Fax: (+374 10) 511 212
www.conversebank.am

36224